49. ԴԱՏԱՄԱՀՐՈՒՄ ՏՂԵՆ Ո՞ՐՆ Է

Կէղնի, չէղնի երևելի թուճարըմ կէղնի։ Հ՝ըմեն տարի կէրթա թուճրութենի։ Յոթ տարի կմնա, սորա կդառնա, կիգա ուր տուն։ Էդոր սովորութեն էդ է։

Էդոր էրկու տղա կեր։ Հ՝ըմեն հեղ կէրթա թուճրութենի, յոթ տարի կմնա, կիգա։ Մարդու մը մեկ շատ խարազ կէնե, օր էրթա էդոր կնկան մոտենա, չկանա։ Հ՝էնօր օր էդ մարդ կիգա, վերջապես դրկիցներ, քաղքըցիք կթափեն, կիգան աչքը լուսին, էդ մարդ լե, օր էդոր կնկան կդատի, կիգա կէրթա տան թարաֆ։

Կէրթա օր, կնիկ քնուկ կէղնի։ Կիմցու, զուր գործ կտեսնա, կթողե, կէրթա։

Մինչև օր տրվան կբլի, թուճար կէլնի, կիգա, օր պառկի ուր կնկա խեչ, ձեռկ կթալե, օր մոտենա, կնիկ կասե.—Մարդ, աստված զխեր էնե, դու յոթ տարին հեղըմ կիգեր իմ մոտ, նոր գացիր իմ խիչեն, քզիկ ի՞նչ էղավ։

Մարդ կհասկնա, օր ուրիշ մարդ է էկի ուր կնկա խեչ ու գացի, ձեն չհանե։

Կմնա, ժամանակ օր կլրցվի, տղե մը լե կէղնի մարդուն, կէլնի իրեկ տղա։ Էփեի վախտ կանցնի։ Մարդ կընկնի հիվանդ։ Գինա օր պիտի մեռնի։ Կկանչե ղիրեկ տղեն, կառնե կիգա։ Կբերե ղիրեկ տղեն օսյաթ ամանաթ կէնե, կասե.— Լաո, գինաք հ՝ետև իմ հ՝ընցման, ձենե մեկ դատամահրում է իմ ունեցածից ու չունեցածից, ֆախատ բայան չէնե, թե որ մեկն է, որ մեկ չէ։

Կընկնի մեռնի։

Մարդու մեռնելեն վերջ տղեկներ կէլնին կէրթան շարյաթ, տեսնան թե ուրանցնե ո՞ր մեկն է դատամահրում։

Կընկնան ճամբաի, կիգան։

Մեծ տղեն կասե.— Ախբըրտանք, էդա ճամբով կնիկ մ՝ է գացի։

Միջինեկ լե կասե.— Կնիկ օր գացեր է էդ ճամբով, էրկու հոգով է։

Պղտիկ լե կասե.— Էդ կնիկ ըռկեր է ուրանց տնեն, թողեր է գացի։

Քիչըմ հ՝առեջ կէրթան։ Էնդիեն մարդըմ կիգա։— Բարի լուս, ախբըրտանք, կյալո, կնիկըմ չէք տեսե՞ր ի էդա դիով հ՝ընցի։

Մեծ տղեն կասե.— Կնիկըմ հ՝ընցեր է էդա ճամբով։

Միջինեկ կասե.— Քու կնիկ էրկու հոգո՞վ է։

Կասե.— Հա, վալլահի, էրկու հոգով է։

Պզտիկ տղեն կասե.— Քու կնիկ ըռկե՞ր է քու տնեն։

Կասե.— Հա, վալլահի, ըռկեր է։

Մարդ կասե.—Դո՞ր է իմ կնիկ, տվեք զիմ կնիկ, առնեմ էրթամ։

Կվերցուն կասին.— Ախբեր, վալլահի մենք զքու կնիկ չընք տեսեր։

— Տո,— մարդ կասե,— դուք իմալ օր կպատմեք, իմ կնիկ ձըր մոտն է, հ՝որի՞ կարգիլեք։ Տվեք զիմ կնիկ, առնեմ էրթամ։

Էդ տեխ զիրար կտավըշտին։

Կասին.— Ախբեր, մենք կէրթանք մըտ խաղին, էկո դու լե մըր հետ էրթանք, խաղին հասուց, օր ասեց՝ ձըր մոտն է, առ զքու կնիկ, էկո։

Կընկնեն հ՝իրարու հ՝ետև, կիգան։ Կնկա տեր լե կիգա շարյաթ։ Բավական տեխ կիգան, կընկնին չայիրիմ մեջ։ Մեծ ախբեր կասե.—Տղա, դևե մ՝ը դետա գացիր է։

Միջինեկ ախբեր կասե.— Դևեն մեկ աչքեն է։

Պզտիկ ախբեր կասե.— Դևեն բառցուկ է, թայըմ քացախ, մեկ լե՝ ռուպ է։

Քիչըմ հ՝առեջ կէրթան։ Մարդըմ կիգա։

Կասե.—Ախբըրտանք, դևե մը չե՞ք տեսեր ի դետա հ՝ընցի։

Մեծ ախբեր կասե.—Վալլահի դևե մը գեդա ընցեր է։

Միջնեկ կասե.— Քու դևեն մեկ աչքեն չէ՞։

Կասե.— Հա, վալլահի, մեկ աչքեն է։

Պզտիկ կասե.— Քու դևեն բառցուկ չէ՞, թայըմ քացախ է, մեկ լե՝ ռուպ։

Կասե.— Հա, վալլահի, թայըմ քացախ է, մեկ լե ռուպ։

— Ըպա խուրբան, զիմ դևեն տվեք, ես էրթամ, ես խեղճ եմ։

— Մենք զքու դևեն չընք տեսեր ի։

— Աստված զձըր տուն շինե, էդա օր սալըխ կիտաք, իմա՞լ չեք տեսի։

Խալաբալըզըմ, հալահուլե մը կփրցուն։

Մեծ ախբերն կասե.— Մենք կէրթանք խազու մոտ շարյաթ, էկո դու լե էրթանք, օր հասուց, առ զքու դևեն, դառցի էկո։

Էն լե հ՝ընկավ էնդոնց հ՝ետևեն, էկան խազու մոտ շարյաթ։

Կիգան խազու դիվան։ Հ՝առջին հեզ կնկա տեր կգանգտի։

Խազին կասե.—Էդա մարդ իմալ օր կասե, էդոր կնիկ ձըր մոտն է, հ՝որի՞ չըք իտա։

Մարդիկ կվերցուն կասին.— Խազի աֆանդի, մենք էդա մարդու կնկաց խարար չունենք, մենք էկանք ճամբու հետ, կնկա ըռեճ ու մարդուն բալի է. կնկա ըռեճըմ ընցեր էր, ասի՝ ախբըրտանք, կինաք, էդա ճամբով կնիկըմ է ընցի։

Միջինեկ ախբոր կհարցու, թե.— Դու ի՞նչեն գիցար, առանց տեսնալու, էրկու հոգով էր էդ կնիկ։

Կասե.— Խազի աֆանդի, հայտնի բան է, էրկու հոգով կնիկ օր կնստի, կդառնա օր հ՝ելնի կանի, զձեռք կզարկե գետին, սորա կէլնի կանի։ Տեսա օր էդ կնիկ հ՝ելնելու վախտ զուր ձեռք դրեր էր գետին, սորա էր կանի, ասի՝ էրկու հոգով է։

Պզտիկ տղից կհարցու.— Դու ի՞նչեն գիներ օր ըռկեր էր տնեն, կէրթեր։

Ասեց.— Տաս տախա քելեր էր ու դառցի հետ իշքե, տեսնա մարդ կիգա օր դառցու, գիցա օր ըռկեր էր։

Կնկա տիրուն կասե խազին.— Լաո, էդ մարդիկ խաբար չունեն քու կնկադ, ո՞ր գինա ինչ դիով է գացի քու կնիկ, թորկ գնա, զքու կնիկ փնտռե։

Ըստ հազ դևի տեր կիգա մեյդան։

Կհարցու խազին մեծ ախբորնե.— Ի՞նչեն գիցար դևե մ՝ հ՝ընցեր է։

Մեծ ախբերն կասե.—Խազի աֆանդի, դևի ըռեճն բալի բան է. հ՝ըմեն մարդ լե գինա։ Տեսա օր դևեմ հ՝ընցեր է, ասի՝ ախբըրտանք, գինաք էդա ճամբով դևե մ հ՝ընցեր է։

Կհարցու միջինեկ ախբորնե, թե.—Տզա՛, դու անտեսնալ ի՞նչեն գիցար, օր էդ դևեն քոռ էր։

Միջինեկ ախբերն կասե.— Խազի աֆանդի, ճամբու հետ էրթալու վախտ մեկդիի վրեն արծի, զմեկ դին թոզեր էր, հասկցա օր քոռ էր, չտեսեր էր արծեր։

Կհարցու պզտիկ տղից.— Դու ի՞նչեն գիցար էդ դևեն բառցուկ էր, մեկ թայ քացախ էր, մեկ լե՝ ռուպ։

Պզտիկ տղեն կասե.— Խազի աֆանդի, արև օր զարկեր էր, էրկուա լե պատռած են, քացախ գացեր էր մեկ դիի վրեն, ռուպ՝ մեկ դիին։ Էնդին օր քացախն էր գացի, քացախի թեղութենից հող քրքշեր էր, բան-

ձըրցի։ Էնդիեն օր ռուպն էր գացի, ճանճեր թափած են վրեն։ Հասկցա, օր մեկ թաւ քացախ է Հղի, մեկ լե՝ ռուպ։

Դևի տիրուն լե խաբար տվեց խաղին.—Էդա մարդիկ խարար չունեն քու դևից, թող դնա տես հ՚ուր իս կորցուցի, փնտռե։

Էն լե թողեց գնաց։

Էղավ հ՚իրկուն։ Խազին ճամբեց տուն, օշխարըմ մորթել տվեց, աղեկ հ՚օդե մը սարքեց, առավ զէդ իրեկ ախբեր, գնաց տուն։

Գացին տուն, քիչըմ մանցին, մշկուն ասեց.— Հաց առ, գնա էդ մարդերուն։

Սուֆրեն հազրին, մշակ առավ էկավ, փռեց, հաց քաշեցին։ Մեծ տղեն հ՚իջավ բըրդուճըմ դրեց ուր բերան։ Ասեց.—Արնի հոտ կիգա էդ ղադեն, չուտվի։

Քաշվավ ետ։

Միջինեկ տղեն հ՚իջավ, վերցուց բըրդուճըմ միս, ասեց.—Շան մայա է։

Չկերավ, քաշվավ հետ։

Պղտիկ տղեն հ՚իջավ, աշքեց սեղնի վրեն, ասեց.—Խազին բիճ է, ուր հաց չուտվի։

Էն լե քաշվավ ետ։

Մշկուն ասին.— Վերցու, առ գնա։

Մշակ վերցուց սեղան, հըմալ ալաստա, առավ գնաց։ Առավ գնաց, դրեց տախտ, խազին աշքեց տեսավ օր մեկ բըրդուճ բան չըն կերած։

Խազին ասեց.— Մշակ, աստված զխերն էնե, էդ մարդիկ հ՚ո՞րի հաց չկերան։

Մշակ չըր հ՚իշխներ ասեր, շատ զորեց վրեն, մշակն ասեց.—Խազի աֆանդի, քզիկ ինչ պատմեմ, հաց օր տարա դրի, հ՚իջավ մեծ ախբեր, բրդուճըմ առավ, ասեց՝ արնի հոտ կիգա խազու հացեն։ Միջինեկ հ՚իջավ, ասեց՝ շան մայա կա էդ մսի մեջ։ Պղտիկ լե հ՚իջավ, ասեց՝ խազին բիճ է, ուր հաց չուտվի։ Իրեկ լե թողին սեղնի վրավեն հ՚ելան, ուրանց տեխ նստան։

Խազին կանչեց զուր ըրընճբարն, առավ էկավ։

Ասեց.— Էդա հաց ի՞նչ հաց է։

Ըրընճբարն ասեց.— Գերեղմներու հ՚արտի հացն է, օր ֆըլան թայեխին կռիվ էղավ մեջ։

Խազին ասեց.— Օղորդ է մարդոց ասածները։

Կանչեց ըստ հաղ զհովիվն բերեց, ըսեց.

— Հովիվ, էդա օշխարն օր մորթեր իս, ի՞նչ օշխար է, զօղորդն ասա։

Հովիվն ասեց.—Խազի ոֆանդի, աշուն մզիկ էծըմ ծնավ, մամ փիցավ, ուլ մնաց։ Հեռի լսողաց մոտեն, մզիկ քածըմ կեր, նոր էր թըլխի, բերի զուլ թողի, էդ շան սովրավ, ծծեց հար մեծցավ։ Էդի էն ուլն է։

Խազին ասեց.— Էդա լե մարդոց խոսք հ՝ելավ։

Կանչեց զմամ։

— Մամո,— ասեց,— ես բիճ իմ, էկո զարդարն ասե։

Մամն է, հիչ խսբաթ կէնե ուր վրեն.—Լաո, դու ինչ բիճ իս, իմ հալալ տղեն իս, դու լե էդ դոլազներուն անկաճ կէնիս։

— Մամո, զօղորդն ասա, մարդիկ սուտ չըն խոսա, ես բիճ իմ, իմա՞լ է էղի, ընծիկ ասա։

Մամն, ճար կտրավ, էլ տեսավ տղի ձեռքեն չազատի, ասեց.— Կովի տարին մարդըմ էկավ մըր տուն, գիշեր քնավ, հ՝ելավ գնաց, դու էնդըրնե իս։

Խազին սևավորվավ, նստավ։ Ասեց.—Էդա մարդիկ օր զէդ բաներ խոսացին, ես իմա՞լ էրթամ նստիմ լուսուն շարյաթ էնիմ։

Հ՝ելավ լուսուն նստավ տուն, չիշխնա էրթա զուր տիվնի դուռ բանա, ջարյաթ էնե։ Խազին նստավ տուն, աշխարք ալամ թափան խազու դուռ, զիրար կուտեն, խազին տեխեն չխըլվըլա։

Տեսնանք խազին ե՞ր կիգա։

Խազու ախչիկ հ՝ելավ դուրս, տեսավ օր ուրանց դուռ հըմալ ին լըցվի, ասեղ թալելու տեխ չկա, ասեց.—Աբո, դու հ՝որի՞ չըս էրթա բանա զքու դիվնի դուռ, էդա խրդար մարդ լըցվիր ին, քզիկ կիշքեն։

Խազին ասեց.— Լաո, իմա՞լ էրթամ, էդա մարդիկ էկած ին, օր զուրանց շարյաթ էնեմ, երեկ ինչ օր խոսացին, ուրանց խոսք էլավ, հ՝առջին հեղ լե էդոնց շարյաթն է։ Ես իմա՞լ էրթամ նստիմ էդոնց հ՝առեջ, շարյաթ էնեմ։

Ախչիկն ասեց.— Աբո, օր հըմալ է, զքու հալվըներ տուր, ես կէրթամ։

Առավ զպապու շորեր, հագավ, գնաց էդ դուռ կանողներուն ասեց.— Հ՝էսօր դուք գացեք, խարիբ մարդ էկեր ին, դոր էնդոնցն է, ձըր թըղ մնա վաղ։

Ճամբու դրեց զէնդոնք։ Գնաց ճամբեց զէդ իրեկ մարդն առան էկան։

Տարավ ասեց.— Հ՝առջին հեղ ես բանըմ կասիմ, զիմ շարյաթն էրեք, օր ես ասիմ ձենե որն է դատամահրում, հ՝ելնեք էրթաք։

Աֆանդրմ, ախչիկն կասե, թե.—Ժամտնակին մարդու մը մեկ կէրթա մեկի մը տուն մշակ կէղնի։ Էդ մարդուն լե քանի մը հատ ախչիկ կէղնի։ Կասե՝ ես յոթ տարի մշկուութեն կէնիմ, ախչիկըմ տուր ընծիկ։ Մարդ լե կհոժարանա, կասե՝ շատ աղեկ։ Տղեն է, յոթ տարի կծառայե էդ մարդուն։ Յոթ տարիեն վերջ զէն ախչիկ կէլնի ուրիշ մարդու կիտա։

Տղեն կասե՝ ուխտ ու խըրատ էղնի, ես զիմ հաց պիտի կապիմ իմ պառեկ ու օլբրտիմ էդ ախչկա ետև, չուր ի զէդոր ազպութեն չավրիմ, վազ չիդամ ուրնե։ Ադանդրմ, տղեն զուր հաց կկապե պառեկ ու հայտուկի պես կընկնի ճամբըներու վրեն, կէրթա կիգա։ Օրըմ ախչիկ հաց կառնե, կէրթա հ՝արտ ուր ախբբրտոց, տղեն կտեսնա, ղճամբախ կպահե հար ախչիկ կդառնա, կիգա։ Ախչիկ կիգա, տղեն կէլնի հ՝առեշ, զախչիկ կբռնե։ Կբռնե օսլով մը կդնե դետին, օր աղեկըմ շինե, կասե. «Ախչի, յոթ տարի քու խաթրի համար քու պապուն մշկութեն էրի, օր զքզիկ իտեր ընծիկ, սորա խաբեց՝ չտվեց, ուրիշին տվեց, հ՝էսօր զքզիկ աղեկըմ չուր չպզծեմ, ղքզիկ չպիտի թողիմ էրթաս»։ Վել հասըլ, աղեկըմ զաղշկա գործ էդ է որ կհոգա։ Ախչիկն կասե. «Տղա, զիմ ազպութեն մ՝ ավրի, ուխտ էղնի, պսակվիմ, հ՝առջին գիշեր քու խեչ հ՝իգամ պառկիմ»։ Տղեն մտածեց, դուշունմիշ, տաշըրմիշ էղավ, ասեց. «Ախչի, մադամ օր դու հըմալ կասիս, ղքու ազպութեն հըմկա չըմ ավրի, կթողիմ՝ սալամաթ էրթաս, բըլե պսակվելու հ՝առջին գիշեր իմ խեչ հ՝իգաս, սորա էրթաս պառկիս քու իրկա մոտ»։ Թողեց, զախչիկ գնաց։ Մնաց մինչև աշուն։ Աշուն զախչիկ տարան, տարան պսակեցին։ Հ՝իրկուն տարան կմեկտեխեն, ախչիկ կանավ ճրագի սունըվեր ու լաց։ Իրեկն ասեց. «Ախչի, դու հ՝որի՞ կիլաս, ես ու դու խարիբ չինք, մենք զիրար հ՝ըմնօր լե տեսեր ինք, ասե՞մ խարիբ իս, կխարիբցուս, կիլաս, չէ քու աֆքյարն ի՞նչ է, խըսա էրե՝ տեսնամ»։ Ախչիկ ձեն չիտա, կաներ է հունգուռ-հունգուռ կիլա։ Շատ տղեն կստիպե ախչկա վրեն, ախչիկն կասե. «Ալ ու քեֆյաթ ֆըլան վախտ հըմալա ուխտըմ էրի, կիլամ, տեսնանք քու ըսելիքն ի՞նչ է»։ Տղեն ասեց. «Ջանըմ, ես ասի գինամ ի՞նչ է պատահի, կիլաս. է՞գ է, էդի հեչ»։ Ասեց ու հ՝ելավ վառեց զֆանար, հ՝ընկավ կնկա հ՝առեջ, առավ գնաց, մշկի դուռ կանավ։ Ջարկ զդուռ, մարդ հ՝ելավ բացեց։ Օր հ՝ելավ բացեց, բռնեց կնկա ձեռքեն մութըվներ մըտուց ներս, զդուռ քաշեց վրեն ու դառցավ էկավ։ Մշակ զճրագ կպուց, աշքեց՝ նորհարսըմ խըմլուկ, քըմլուկ, կանուկ տախտի մեջ։ «Հիսոս, Քրիստոս,— ասեց,— էդի սատանա՞ է, ի՞նչ է»։ Հարցուց անեց. «Դու ի՞նչ իս»։ Ասեց. «Ես էն ախչիկն եմ, օր դու իմ պապուն յոթ տարի խզմաթ էրիր, չտվեց քզիկ, հ՝ելավ ուրիշին տվեց, էկար իմ հ՝առեջ, զիմ ազպութեն օր ավրեր, ուխտ էրի քզիկ, ասի՝ հըմկա զիմ ազպութեն մ՝ ավրի, օր կարգվիմ հ՝առջին գիշեր հ՝իգամ քու խեչ, սորա էրթամ իմ էրկան, էկեր իմ, ինչ կուզիս էրե»։

Մատամ օր ասեց տղեն ախչկան. «Դու օր ասես քու իրկան ու քու իրեկ առեր է բրխո էկեր է զքզիկ իմ տուն, զդուռ բացի, էրի ներս ու դառցի գացի, զքզիկ ազատ էրի, բարով վելիք զիրար, ընծի պետկ չիս»։

Հ՝ելավ, ձեռկըմ աղեկ հալավ հագուց ախչկան, կպուց զուր ֆանար, հ՝ընկավ ախչկա հ՝առեջ, տարավ ուր իրկա տուն, զդուռ բացեց, ասեց.

«Մատամ օր դու հըմլա իս էրի, քու կնիկ իմ մամն ու քուրն է, առ զքո՝ կնիկ»։

Խազու ախչիկն է, օր զուր պատմութեն խըլըսցուց, դառցավ մեծ տղի վրեն, ասեց.—Դու օր էղներ էն ախչկա տեխ, զէդ հ՝առաջարկ քու էրկան կէնե՞ր։

Մեծ տղեն ասեց.— Չէ, վալլահի։

— Էհվալլահ ուրեն ու ուր կաթին, օր ուր խոսքի տեր մնաց։

Դառցավ միչինեկ տղին ասեց.—Տղա՛, օր դու էն ախչկա էրկա տեխն էղներ, քզիկ օր ասեր հըմլա բանըմ կա, դու զքու կնիկ պիտի տանե՞ր, թասլիմ էներ էն մշկուն։

Տղենն ասեց.—Չէ, վալլահ։

Էհվալլահ ուրեն ու ուր մարդութենին, օր զուր կնկա խաթըր չկոտրեց։

Դառցավ պզտիկ տղից հարցուց.—Տղա՛, օր դու էն մշկու տեխ էղներ, օր բերեց քզիկ թասլիմ էնեց, դու ձեռկըմ հալալ կհադուցնե՞ր, տաներ, թասլիմ էներ ուր էրկան։

Պզտիկ տղեն ասեց.— Չէ, վալլահի, խիյամըթին, չուրի աղեկըմ չշինենք, զիմ յոթ տարվան հայիֆ չառնենք, չընք տանե թասլիմ էնե։

Տղեն օր հըմալ ասեց, ախչիկն վերուց ասեց.—Ձենե էդա բիճ է, դատամահրումն էդա է։

Էդ տեխեն թողեցին, առան զիրար, էկան ու պզտիկ տղեն առանց քանըմ առնելու ուր ախբըրտոց մոտեն, թողեց տնեն, հ՝ելավ դուրս։

Էնդոնք օր թողին գացին, ախչիկն տառցավ էկավ տուն, պապուն ասեց.—Աբո, դը հ՝ելի, գնա նստի քու տեխ, էրե զքու խազութեն, զէնդոնք ճամբըցուցի. դատամահրում պզտիկ տղեն էր։

Նոր հ՝ելավ խաղին գնաց, նստավ ուր տեխ ու զուր խազութեն էրեց։ Աստծուց հ՝իջավ իրեկ խնձոր, մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լե անկաճ էնողին։